



ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Retrieve Legal & Tax

+374 (41)777332

info@retrieve.am

www.retrieve.am

Yerevan, Armenia

1. Աջակցություն՝ աշխատանքային միգրանտների ներգրավման համար

Եթե ձեր ընկերությունը ներգրավում է օտարերկրյա մասնագետների, ովքեր աշխատում են որպես վարձու աշխատողներ, ապա պետությունը կտրամադրի եկամտային հարկի 60%-ի չափով վերադարձ:

ՀՀ քաղաքացիություն ունեցող երկքաղաքացիները այս իմաստով աշխատանքային միգրանտ չեն համարվում:

Օրինակ՝ ձեր ընկերությունը ներգրավում է մի օտարերկրյա մասնագետի, որի համար ամեն ամիս վճարում եք 300,000 դրամ եկամտային հարկ: Այս դեպքում պետությունը ձեզ կվերադարձնի 180,000 դրամ, ինչը կնվազեցնի աշխատակիցների ներգրավման ընդհանուր ծախսերը:

Ընդ որում, 2025 թվականին վերադարձը կստանա ընկերությունը, իսկ 2026-ից սկսած՝ աշխատանքային միգրանտ աշխատակիցը:

2. Նոր աշխատակիցների ներգրավման համար հարկային արտոնություններ

«Բարձր տեխնոլոգիաների ոլորտին տրամադրվող պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը նաև նախատեսում է հարկային արտոնություններ նոր աշխատակիցների ներգրավման համար՝ կախված աշխատակիցների ընդհանուր քանակից: Նոր աշխատակիցների ներգրավման դեպքում աջակցությունը տրամադրվում է մինչև երեք օրացուցային տարի՝ սկսած աշխատակցի աշխատանքի անցնելու օրվանից:

Ընդ որում, այս մասով օրենքը հետադարձ ուժ չունի, ինչ նշանակում է, որ այս արտո-

նությունից չեն օգտվի այն մասնագետները, ովքեր ՏՏ ոլորտ են մուտք գործել, օրինակ, 2024 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Իսկ 2025թ-ի հունվարի 1-ից ոլորտ մուտք գործողները կօգտվեն այս արտոնությունից՝ անկախ նրանից, թե նրանք քանի անգամ կփոխեն իրենց աշխատատեղը:

Այս իմաստով **նոր աշխատակից** են համարվում առաջին անգամ ՏՏ ոլորտ մուտք գործած և Կառավարության կողմից սահմանված ցանկում ներառված մասնագիտական աշխատանք կատարող աշխատողները:

Օրինակ՝ եթե աշխատակցի եկամտային հարկը կազմում է 200.000 դրամ, ապա պետությունը կվերադարձնի այդ գումարի 60%-ը՝ 120.000 դրամ:

3. Աջակցություն՝ աշխատակիցների վերապատրաստման համար

Օրենքը նաև նախատեսում է աջակցություն աշխատակիցների վերապատրաստման համար՝ փոխհատուցելով գործատուին տվյալ աշխատակցի տվյալ եռամսյակի եկամտային հարկի 50%-ի չափով:

Օրինակ՝ Ձեր ընկերությունը աշխատակցին ուղարկում է մասնագիտական վերապատրաստման դասընթացների, ու եթե տվյալ աշխատակցի եկամտային հարկը ամբողջ եռամսյակում 1.000.000 է, ապա ստանում է հետ վերադարձ՝ 500.000 դրամ:

Նշենք նաև, որ վերոնշյալ բոլոր դեպքերում պետական աջակցությունը չի կարող գերազանցել նույն հաշվետու ժամանակաշրջանի մասով տվյալ տնտեսավարող սուբյեկտի բոլոր աշխատողների գծով հաշվարկված եկամտային հարկի 50%-ը:

4. 10% եկամտային հարկ՝ գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների համար

ՀՀ հարկային օրենսգրքի նոր փոփոխությամբ խթանվում է ընկերությունների կողմից R&D (գիտահետազոտական աշխատանքներն ու փորձարարական մշակումները) աշխատանքները: Մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությանն արժանացած գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքներում ներգրավված, մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված զբաղմունքներով զբաղվող անձնակազմին վճարվող աշխատավարձը կհարկվի 10 տոկոս եկամտային հարկի դրույքաչափով:

5. Շրջանառության հարկի մասով արտոնություններ

Շրջանառության հարկը 5%-ի փոխարեն սահմանվում է 1%, ինչը կթեթևացնի ընկերությունների հարկային բեռը:

Սակայն հարկային բեռի նվազեցմանը զուգահեռ ավելացել է նոր սահմանափակում, համաձայն որի՝ եթե տեղական ՏՏ ընկերությունը, որը գործում է շրջանառության հարկի դաշտում և ծառայություններ է մատուցում հարկման ընդհանուր դաշտում գործող բիզնեսի, ապա ծառայություն ստացող ընկերությունը այդ ծախսը չի կարող նվազեցնել շահութահարկի հաշվարկում:

Օրինակ՝ նախկինում ՏՏ ընկերությունը ծառայություններ էր մատուցում հայկական մեծ բիզնեսին՝ ամեն ամիս 1.000.000 դրամի չափով: ՏՏ ընկերությունը վճարում էր 50.000 դրամ շրջանառության հարկ, իսկ ծառայություն ստացողը իր հաշվարկում այդ ծախսը նվազեցնում էր, հետևաբար՝ խնայում 180.000 դրամ հարկ: Նոր օրենքով ՏՏ ընկերությունը 50.000

դրամի փոխարեն կվճարի 10.000 դրամ, սակայն ծառայություն ստացողն այլևս չի կարողանա իր հարկը նվազեցնել 180.000 դրամով:

6. Շահութահարկի մասով արտոնություններ

Գիտահետազոտական և փորձարարական մշակումների համար նախատեսվում են հարկվող շահույթից հավելյալ նվազեցումներ, ինչպես նաև ակտիվների արագացված ամորտիզացիա, ինչը թույլ կտա ընկերություններին էականորեն ավել քիչ շահութահարկ վճարել:

Շահութահարկի մասով կան հետևյալ արտոնությունները .

- Ակտիվների արագացված ամորտիզացիոն ժամկետ, սակայն ոչ պակաս քան 1 տարի, եթե առկա է Կառավարության կողմից ձևավորված համապատասխան հանձնաժողովի դրական եզրակացությունը:
- Ստացած նպատակային դրամական միջոցները եկամուտ են համարվում այն հարկային տարում, երբ այդ դրամական միջոցներով ձեռք բերված, կառուցված, ստեղծված կամ մշակված ակտիվները ճանաչվում են որպես ծախս կամ կորուստ: Այս արտոնությունը գործում է մինչև 50 աշխատակից /աշխատակից և քաղիրավական պայմանագրով ծառայություններ մատուցողներ/ ունեցող ընկերությունների համար:
- Համախառն եկամուտից անմիջապես այդ ծախսերը կատարելու տարում նվազեցվում է գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքների վրա կատարվող ծախսերը, անկախ նրանից՝ դրանք նա կատարել է ինքնուրույն, թե պատվիրել է մեկ այլ ընկերությանը:

-
- Բիզնեսները հնարավորություն են ստանում իրենց շահութահարկը հաշվելիս հավելյալ նվազեցնել մասնագիտական աշխատանք կատարողների մասնագիտական աշխատանքի մասով հաշվարկված աշխատավարձի 200 տոկոսի չափով: Այս նվազեցումը չի կարող գերազանցել հաշվարկված հարկման բազայի 50 տոկոսը:

Գործնականում այս կետը նշանակում է, որ գրեթե բոլոր մեծ ընկերությունների շահութահարկը 18%-ի փոխարեն կլինի դրա մոտ կեսը՝ 9%, քանի որ իրենց ծախսերի կառուցվածքը թույլ է տալու օգտվել այս կետով սահմանված արտոնության առավելագույնից:

- Տրվում է հավելյալ նվազեցման /այլ նվազեցման/ հնարավորություն, մասնավորապես մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությանն արժանացած գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված զբաղմունքներով զբաղվող անձնակազմի աշխատավարձի 200 տոկոսի չափով:

Ընդ որում, այս արտոնությունից կարող են օգտվել ոչ միայն ՏՏ ընկերությունները, այլ բոլոր այն ընկերությունները, որոնք իրականացնում են գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ:

Օրենքով սահմանված եկամտային հարկի փոխհատուցման դրույթներից օգտվելու համար ընկերությունը նախ պետք է վճարի բոլոր հարկերը, հետո միայն դիմում ներկայացնի և ստանա փոխհատուցում:

Շահութահարկի դրույքաչափը մինչև 2023թ.-ը 0 տոկոս էր, այնուհետև այդ արտոնությունը վերացավ, և 2024թ.-ի համար ընկերությունները պետք է վճարեին 18% շահութահարկ: Սակայն այս նախագիծը նախատեսում է հետին ուժ,

այսինքն 2024թ.-ի համար շահութահարկ հաշվելիս բիզնեսները հնարավորություն կունենան կատարել հավելյալ նվազեցումներ, այսինքն՝ ավելի քիչ հարկ մուծել, որոնք նախատեսվում են այս օրենքով:

Ց Ա Ն Կ

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱՅՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Կոդը	Գործունեության տեսակի անվանումը
C26.11.0	Էլեկտրոնային բաղադրամասերի արտադրություն
C26.12.0	Հալիաբաժ Էլեկտրոնային մեկուսատուականների արտադրություն
C26.20.0	Համակարգիչների և ծայրամասային սարքավածքների արտադրություն
C26.30.0	Կապի սարքավորանքի արտադրություն
C26.40.0	Կենցաղային Էլեկտրոնային սարքավորանքի արտադրություն
C26.51.0	Չափիչ, ստուգիչ, փորձարկիչ և նավագնացական գործիքների ու սարքերի արտադրություն
C26.60.0	Ճառագայթահարող, Էլեկտրաբժշկական և Էլեկտրաբուժական սարքավորանքի արտադրություն
C26.70.0	Օպտիկական գործիքների և լուսանկարչական սարքավորանքի արտադրություն
C26.80.0	Մագնիսական և օպտիկական տեղեկատվական կրիչների արտադրություն
C28.11.0	Շարժիչների և տուրբինների, բացառությամբ ավտոմեքենաների, մոտոցիկլային և օդագնացական, արտադրություն
C28.12.0	Հիդրավլիկական սարքավորանքի արտադրություն
C28.99.0	Հատուկ նշանակության այլ մեքենաների արտադրություն՝ չներառված ուրիշ խմբավորումներում
C29.31.0	Ավտոմեքենաների և դրանց շարժիչների համար Էլեկտրական և Էլեկտրոնային սարքավորանքի արտադրություն
C30.30.1	Օդանավերի և տիեզերանավերի արտադրություն
C30.30.2	Այլ թռչող սարքերի արտադրություն
C30.30.9	Օդանավերի, տիեզերանավերի և այլ թռչող սարքերի համար մասերի արտադրություն
C30.40.0	Մարտական մեքենաների արտադրություն
J58.21.0	Համակարգչային խաղերի հրատարակություն
J58.29.0	Այլ համակարգչային ծրագրերի հրատարակություն
J62.01.0	Ծրագրային սպահովման մշակում
J62.02.1	Էլեկտրոնային համակարգերի հախազծում, թեստավորում և մշակում
J62.02.9	Խորհրդատվական գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում՝ չներառված ուրիշ խմբավորումներում
J62.03.0	Համակարգչային համակարգերի կառավարման գործունեություն
J62.09.0	Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային տեխնիկայի բնագավառում այլ գործունեություն
J63.11.1	Տվյալների հիմնադրարկների և տեղեկատվական ռեսուրսների մշակում և կիրառում
J63.11.3	Օպերատիվ ռեժիմում ծրագրային սպահովմանն առնչվող սպասարկման ծառայությունները՝ կիրառական ծրագրերի և համակարգչային ծրագրային ու տեխնիկական միջոցների սպասարկում
J63.12.0	Վեբ-պորտալների հետ կապված գործողություններ
M71.12.5	Ինտեգրալային սխեմաների հախազծում և թեստավորում
M72.11.0	Գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ կենսատեխնոլոգիաների բնագավառում
M72.19.1	Գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ բնական գիտությունների բնագավառում
M72.19.2	Գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ տեխնիկական գիտությունների և տեխնոլոգիաների բնագավառում
M72.20.0	Գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառում